ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «26» հուլիս 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 27-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ, ՀԱՅՏԻ ՁԵՎԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿԸ, ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ կետի 12-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հուլիսի 11-ի N 891-Ն որոշումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Կազմակերպել գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու հայտերի ընտրության մրցույթ:

2. Ստեղծել հայտերի գնահատման մրցութային հանձնաժողով:

3. Հաստատել՝

1) ֆինանսական աջակցություն տրամադրելու կարգը՝ համաձայն հավելված N 1-ի,
2) մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 2-ի,
3) մրցույթի հայտի ձևը՝ համաձայն հավելված N 3-ի,
4) հայտի գնահատման թերթիկը՝ համաձայն հավելված N4-ի,
5) մրցութային հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված N 5-ի,
6) մրցութային հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 6-ի:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԳԿ նախագահի
«26» հուլիսի 2019 թ.
N 27-Ա/Ք հրամանի

ԿԱՐԳ
ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրում ընդգրկված գիտական պետական կազմակերպություններին կամ բուհերին (այսուհետ՝ Կազմակերպություն) գիտական սարքի/սարքավորման ձեռքբերման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի կարգը:

2. Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), սույն կարգի պահանջներին համապատասխան, կազմակերպում է Կազմակերպությունների կողմից գիտական սարքի/սարքավորման ձեռքբերման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու նպատակով ներկայացված հայտերի (այսուհետ՝ Հայտ) ընտրության մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):

3. Մրցույթի մասին հայտարարությունը հրապարակվում է Կոմիտեի պաշտոնական կայքում՝ Հայտեր ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետից առնվազն երեսուն օր առաջ:

4. Կազմակերպությունը Կոմիտե է ներկայացնում Հայտ՝ Կոմիտեի կողմից սահմանված կարգով և ձևին համապատասխան:

5. Հայտերը գնահատելու համար Կոմիտեն ստեղծում է մրցութային (գնահատող) հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), հաստատում է Հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը:

6. Հայտերն անհրաժեշտության դեպքում վերադարձվում են լրամշակման, ապա տրամադրվում Հանձնաժողովին:

7. Հայտում հիմնավորվում է տվյալ գիտական սարքի/սարքավորման ձեռքբերման անհրաժեշտությունը և իրականացվող գիտական և/կամ գիտատեխնիկական ծրագիրը, բերվում են տեղեկություններ գիտական սարքը/սարքավորումն օգտագործող մասնագետների որակավորման, սարքի/սարքավորման ընթացիկ շահագործումն ապահովելու ունակության, ինչպես նաև սարքի/սարքավորման ընդհանուր օգտագործման անհրաժեշտության վերաբերյալ:

8. Հայտերի ընտրության ժամանակ նախապատվություն տրվում է այն Հայտին, որում.

1) գիտական սարքի/սարքավորման միջոցով իրականացվելիք գիտական և/կամ գիտատեխնիկական ծրագիրն արդիական է կամ ուղղված է Հայաստանի Հանրապետության տնտեսության կարիքների բավարարմանը կամ անվտանգության մակարդակի բարձրացմանը նպաստող հետազոտությունների կատարմանը,

2) գիտական սարքի/սարքավորման հետ աշխատելու համար ներկայացված մասնագետների որակավորումը հնարավորություն է տալիս իրականացնելու գիտության և տեխնիկայի արդի մակարդակին համապատասխան հետազոտություններ,

3) բավարար են գիտական սարքի/սարքավորման ընթացիկ շահագործումն ապահովող անձնակազմի մասնագիտական որակավորումը և Կազմակերպության ֆինանսական միջոցները,

4) ապահովված է գիտական սարքի/սարքավորման ինքնավար կամ առկա այլ սարքերի/սարքավորումների հետ համատեղ աշխատելու հնարավորությունը,

5) գիտական սարքը/սարքավորումը նախատեսված է մեկից ավելի Կազմակերպությունների համատեղ օգտագործման համար,

6) առկա է (են) արտաբյուջետային միջոցների հաշվին համաֆինանսավորող կողմ (կողմեր)՝ ըստ համաֆինանսավորման համամասնությունների:

9. Համատեղ օգտագործման գիտական սարքի/սարքավորման ձեռքբերման համար Հայտ ներկայացնում է այն Կազմակերպությունը, որտեղ գիտական սարքը/սարքավորումը տեղակայվելու է: Հայտատու Կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն I) կողմից ներկայացված Հայտին կցվում է առնվազն մեկ շահագրգիռ Կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն II) հիմնավորումը՝ վերջինիս գիտական և գիտատեխնիկական գործունեության համար այդ սարքի/սարքավորման անհրաժեշտության մասին:

10. Հայտերի վերջնական գնահատականների հավասարության դեպքում նախապատվություն տրվում է այն Հայտին, որում շահագրգիռ Կազմակերպությունների (Կազմակերպություն II, Կազմակերպություն III և այլն) թիվը, ինչպես նաև համաֆինանսավորման չափաբաժինն ավելի մեծ է, իսկ վերջիններիս հավասարության դեպքում Հանձնաժողովը կազմակերպում է այց Կազմակերպություն I՝ տեղում ծանոթանալու դրա նյութատեխնիկական բազայի վիճակին և համապատասխան մասնագետների առկայությանը: Դրանից հետո միայն տրվում է համապատասխան եզրակացություն:

11. Հանձնաժողովը գնահատման արդյունքների հիման վրա կազմում է վարկանիշային ցանկ՝ Հայտերի վերջնական գնահատականների նվազման կարգով:

12. Կոմիտեի նախագահը, հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից կազմած վարկանիշային ցանկը, հաստատում է ֆինանսական աջակցություն ստացող Կազմակերպությունների ցանկը՝ ըստ տվյալ գիտական սարքի/սարքավորման ձեռքբերման համար առավելագույն գնահատական ստացած Հայտի:

Հավելված N 2
ՀՀ ԳԿ նախագահի
«26» հուլիսի 2019 թ.
N 27-Ա/Ք հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն կազմակերպում է գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու հայտերի ընտրության **ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթը կազմակերպվում է հետևյալ սարքերի/սարքավորումների ձեռքբերման համար.

- **բազմաֆունկցիոնալ սկանավորման համակարգ,**
- **բազմաֆունկցիոնալ լազեր (ճառագայթման սարք),**
- **հեղուկ քրոմատոգրաֆ (մասս-սպեկտրոմետրի հետ համակցված),**
- **UV-VIS սպեկտրոմետր և դիֆերենցիալ սկանավորող միկրոկալորիմետր,**
- **մոլեկուլային (ատոմաուժային) մանրադիտակ,**
- **շարժական լաբորատոր համալիր (գերբարձր հաճախականության),**
- **ռադիոտեղորոշիչ սարքավորում (գերբարձր հաճախականության):**

Յուրաքանչյուր գիտական սարքի/սարքավորման ձեռքբերման համար կարող է տրամադրվել մինչև **60 000.0 հազար** ՀՀ դրամ ֆինանսական աջակցություն:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրում ընդգրկված գիտական պետական կազմակերպությունների կամ բուհերի կողմից՝ համաձայն «Գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի կարգի»:

Մրցույթի հայտի ձևը զետեղված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ինտերնետային կայքում՝ www.scs.am («Գիտական գործունեություն» բաժնի «Հայտերի ձևեր» ենթաբաժին):

Հայտը ներկայացվում է կազմակերպության ղեկավարի գրավոր դիմումով՝ առձեռն (ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22, ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե):

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2019 թվականի սեպտեմբերի 10-ը:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությունում՝ աշխատանքային օրերին ժամը 14:00 - 17:00, հեռախոսներ՝ 21-01-40 (*113), 21-01-40 (*116):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գիտության կոմիտե

Հավելված N 3
ՀՀ ԳԿ նախագահի
«26» հուլիսի 2019 թ.
N 27-Ա/Ք հրամանի

ՀԱՅՏ
ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ

Հայտը հանձնված է «___» _____ 20.. թ. Ծածկագիր՝ _____

(լրացվում է ՀՀ գիտության կոմիտեում)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Գիտական կազմակերպության
   - լրիվ և կրճատ անվանումը
   - հասցեն
   - հեռախոսը
   - էլեկտրոնային փոստի հասցեն
   - ղեկավարի (տնօրեն/ռեկտոր) Ա.Ա.Հ. (լրիվ)
2. Գիտական սարքի/սարքավորման՝
   - անվանումը
   - օգտագործման գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառ(ներ)ը/մասնագիտություն(ներ)ը
3. ՀՀ գիտության կոմիտեից հայցվող ֆինանսական աջակցության չափը (հազար դրամ)
4. Համաֆինանսավորման չափը* (հազար դրամ)

Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը

Ամսաթիվ

---

* *Համաֆինանսավորումը պետք է լինի միայն Կազմակերպության արտաբյուջետային միջոցներից*

ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ/ԿԱՄ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ*

* *Հիմնավորվում է գիտական սարքի/սարքավորման ձեռքբերման անհրաժեշտությունը, իրականացվելիք գիտական և/ կամ գիտատեխնիկական ծրագիրը (մինչև 3 էջ)*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ/ԿԱՄ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն, գիտական աստիճան	Մինչև 5 լավագույն հրապարակումներ (հեղինակ (ներ), վերնագիր, ամսագիր, հատոր, տարի, էջեր)
1 .			1)
			2)
			3)
			4)
			5)
2.			1)
			2)
			3)
			4)
			5)
3.			1)
			...

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ԿԱՄ ԱՅԼ ՍԱՐՔԵՐԻ/ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

1. Գիտական կազմակերպության
   - լրիվ և կրճատ անվանումը
   - հասցեն
   - հեռախոսը
   - էլեկտրոնային փոստի հասցեն
   - ղեկավարի (տնօրեն/ռեկտոր) Ա.Ա.Հ. (լրիվ)
2. Համատեղ իրականացվող գիտական և/կամ գիտատեխնիկական ծրագրի՝
   - անվանումը
   - գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառը/մասնագիտությունը
   - հիմնավորումը (մինչև 2 էջ)
   - հնարավոր մասնակիցների ցուցակը

Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը

Ամսաթիվ

---

* *Լրացվում է յուրաքանչյուր շահագրգիռ կազմակերպության համար առանձին*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

1. Կազմակերպության
   - լրիվ և կրճատ անվանումը
   - հասցեն
   - հեռախոսը
   - էլեկտրոնային փոստի հասցեն
   - ղեկավարի (տնօրեն/ռեկտոր) Ա.Ա.Հ. (լրիվ)
2. Համաֆինանսավորման չափը (հազար դրամ)

Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը

Ամսաթիվ

* *Լրացվում է, եթե կա համաֆինանսավորող կողմ*

Հավելված N 4
ՀՀ ԳԿ նախագահի
«26» հուլիսի 2019 թ.
N 27-Ա/Ք հրամանի

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ
ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԻ

Հայտի ծածկագիրը _____

Գնահատողի Ա.Ա.Հ. (լրիվ) _____ Ամսաթիվ _____

ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ					
Հ/հ	**Չափանիշ**	**Նկարագրություն**	**Գնահատական**	**Կշիռ**	**Կշռային գնահատական**
1.	**Արդիականություն/ անհրաժեշտություն**	Որքանով է արդիական գիտական սարքի/սարքավորման առաջարկվող գիտական ծրագիրը կամ որքանով է այն անհրաժեշտ ՀՀ տնտեսության կարիքների բավարարման կամ անվտանգության մակարդակի բարձրացման տեսանկյունից		3.0	
2.	**Համապատասխանություն**	Որքանով է բավարար գիտական սարքի/սարքավորման առաջարկվող գիտական ծրագրի կատարողների որակավորումը գիտության և տեխնիկայի արդի մակարդակին կամ ՀՀ տնտեսության կարիքների բավարարմանը կամ անվտանգության մակարդակի բարձրացմանը համապատասխան հետազոտություններ իրականացնելու համար		2.0	
3.	**Ընթացիկ շահագործում**	Որքանով են բավարար գիտական սարքի/սարքավորման ընթացիկ շահագործումն ապահովող կազմի մասնագիտական որակավորումը և որքանով են հիմնավորված այն շահագործելու ֆինանսական աղբյուրները		2.0	
4.	**Ինքնավարություն**	Որքանով է ապահովված գիտական սարքի/սարքավորման ինքնավար կամ առկա այլ սարքերի/սարքավորումների հետ աշխատելու հնարավորությունը		1.0	
5.	**Համատեղ օգտագործման հնարավորություն**	Որքանով է հիմնավորված գիտական սարքի/սարքավորման համատեղ օգտագործման անհրաժեշտությունը		1.0	
6.	**Համաֆինանսավորում**	Որքան է գիտական սարքի/սարքավորման ձեռքբերման մեջ համաֆինանսավորման մասնաբաժինը		1.0	
Ընդամենը 1-6 չափանիշներ (առավելագույնը՝ 50 միավոր)					
Վերջնական գնահատականը չափանիշների կշռային գնահատականների գումարն է: Չափանիշի կշռային գնահատականը գնահատականի և կշռի արտադրյալն է:Յուրաքանչյուր չափանիշի գնահատականը տրվում է միավորներով՝ 0-ից մինչև 5 միջակայքից, 0.5 միավորի ճշտությամբ: Նվազագույն գնահատականը 0-ն է, իսկ առավելագույնը՝ 5-ը:					

Հավելված N 5
ՀՀ ԳԿ նախագահի
«26» հուլիսի 2019 թ.
N 27- Ա/Ք հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հ/h	Անուն, ազգանուն	Զբաղեցրած պաշտոն
1.	Սամվել Հարությունյան	ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ նախագահ (հանձնաժողովի նախագահ)
2.	Վարդան Սահակյան	ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ նախագահի տեղակալ
3.	Միեր Մարկոսյան	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ամբիոնի վարիչ
4.	Ռուզան Ասատրյան	ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ, վարչության պետ
5.	Սուրեն Սարգսյան	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, առաջատար գիտաշխատող
6.	Ռոլան Մանուչարյան	ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ, տնօրենի տեղակալ
7.	Ամուր Մարգարյան	Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ), առաջատար գիտաշխատող
8.	Ռուզաննա Սադոյան	Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, դեկան
9.	Գագիկ Հասրաթյան	ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն, տնօրեն
10.	Միխայիլ Աղաջանով	Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան, ամբիոնի վարիչ
11.	Էդվարդ Կոկանյան	Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, ամբիոնի վարիչ
12.	Հակոբ Սարգսյան	ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ, գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)

Հավելված N 6
ՀՀ ԳԿ նախագահի
«26» հուլիսի 2019 թ.
N 27- Ա/Ք հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու հայտերի (այսուհետ՝ Հայտ) գնահատման մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) աշխատակարգը:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3. Հանձնաժողովի նպատակներն են՝

1) Հայտերի գնահատումը,
2) Հայտերի վարկանիշային ցանկի կազմումը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով:

5. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը:

6. Հանձնաժողովի անդամները գնահատում են Հայտը՝ լրացնելով գիտական սարքի/սարքավորման ձեռքբերման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի հայտի գնահատման թերթիկը: Գնահատման թերթիկի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է գնահատականի միջոցով՝ 0-ից մինչև 5 միջակայքից, 0.5 միավորի ճշտությամբ (նվազագույն գնահատականը 0-ն է, իսկ առավելագույնը՝ 5-ը):

7. Հայտի վերջնական գնահատականը Հանձնաժողովի անդամների գնահատականների միջին թվաբանականն է՝ բացառելով առավելագույն և նվազագույն գնահատականները:

8. Հանձնաժողովը կազմում է վարկանիշային ցանկ՝ Հայտերի վերջնական գնահատականների նվազման կարգով:

9. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրվում է Հանձնաժողովի նախագահի և նիստին մասնակցած Հանձնաժողովի անդամների կողմից:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

10. Հանձնաժողովի նախագահը՝

1) վարում է Հանձնաժողովի նիստը,
2) ապահովում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը,
3) համակարգում է Հանձնաժողովի աշխատանքը:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

11. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է Հանձնաժողովի նիստին,
2) լրացնում է գնահատման թերթիկը,
3) ստորագրում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը,
4) կատարում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականները:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

12. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) Հանձնաժողովի անդամ չէ,
2) պատասխանատու է Հանձնաժողովին տրամադրվելիք նյութերի նախապատրաստման համար,
3) նախապատրաստում է Հայտերի գնահատման թերթիկները,
4) Հայտերը տրամադրում է Հանձնաժողովի անդամներին,
5) կազմում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը,
6) ապահովում է Հանձնաժողովի տնօրինության ներքո գտնվող փաստաթղթերի պահպանումը և սահմանված կարգով արխիվացման նպատակով այդ փաստաթղթերի հանձնումը Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարին: